ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիսիան Պողոսեանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Սիսիան Պողոսեան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2023թ., փետրվարի 6-9, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Ֆրանկֆուրտ, ք. Մյունխեն)

4. Հրավիրող կողմը՝ «Հաբեթ Յուզբաշյան» ԱՁ

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Գերմանիայում Հայաստանը ներկայացնող առաջին շնորհանդեսին (ռոուդշոու)

6. Քննարկված թեմաները՝ Գերմանական շուկայում Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ երկիր ներկայացնելու՝ նոր բրենդինգով ու նոր զբոսաշրջային ուղղություններով (մասնավորապես՝ գաստրո, արկածային) և գերմանացի զբոսաշրջիկի համար Հայաստանը ցանկալի զբոսաշրջային ուղղություն դարձնելու հնարավորությունները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Ս. թ. փետրվարի 6-9-ը ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ֆրանկֆուրտ և Մյունխեն քաղաքներում անցկացրեց երկու միջոցառում, որոնց ընթացքում ներկայացվեցին Հայաստանի մասին հագեցած շնորհանդեսներ՝ յուրաքանչյուր քաղաքում նախապես հրավիրված 50-60 գերմանացի տուրօպերատորներին և գործակալներին:

Հյուրերը ծանոթացան Հայաստանի զբոսաշրջային արդյունքների բազմազանությանը, այդ թվում՝ արկածային, մշակութային, գաստրո, էնո զբոսաշրջության հնարավորություններին, երևանյան և մարզային փառատոներին և այլն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման սկզբում կազմակերպվեց հայկական հյուրասիրություն հյուրերի համար, ներկայացվեցին հայկական խոհանոցի ամենահայտնի ուտեստները, հնչեց հայկական երաժշտություն՝ Ֆրակֆուրտում՝ ջութակի, իսկ Մյուխենում՝ սաքսաֆոնի նվագակցությամբ: Գերմանացի տուրոպերատորներին և տուր գործակալներին ներկայացվեցին Հայաստանի զբոսաշրջային հնարավորությունների մասին պատմող տեսահոլովակներ՝ թիրախային 4 ուղղությունների վերաբերյալ (գաստրո և էնո, մշակույթ, բնություն, արկածային), ցուցադրվեցին սահիկաշարեր, ներկայացվեց զբոսաշրջային ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն:

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին գերմանական շուկայի հետ համագործակցությունն ընդլայնելու, ինչպես նաև փոխճանաչողական այցերի անցկացման հետագա հնարավորությունները: Ներկաներին փոխանցվեց նաև հայկական այն տուրոպերատորների և գործակալների վերաբերյալ տեղեկատվություն և տվյալներ, որոնք ցանկություն էին հայտնել աշխատել գերմանական շուկայի հետ: Հյուրերին ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից փոխանցվեցին նաև Հայաստանի նոր զբոսաշրջային բրենդինգով տեղեկատվական բրոշյուրներ և այլ հուշանվերներ:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կայացած հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ առաջիկայում հնարավոր համագործակցության, Հայաստանի զբոսաշրջային հնարավորությունների գովազդի, մարքեթինգային արշավների, համատեղ միջոցառումների իրականացման համար: Հանդիպումների արդյունքում գործընթացը մեկնարկել է, սպասում ենք պաշտոնական նամակագրությանը և առաջարկներին: Ակնկալվում է լայն համագործակցություն սկսել գերմանական խոշոր տուրոպերատորների և գործակալների հետ՝ արդյունքում ունենալով ավելի շատ զբոսաշրջիկներ Գերմանիայից:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

---------- **Սիսիան Պողոսեան**

14.02.23